

ՍՆԱՎՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՈՒՍԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ
ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԿՐԻԿԻԱՅՈՒՄ

Մ. Ն. ՃԵՎԱՀԻՐՃՅԱՆ

VII դարում Արաբական խաղիֆայությունը, հաջող մարտեր մղելով բյուզանդական կայսրության դեմ, արագորեն ընդարձակում էր իր տիրույթները և տարածում իսլամը: Բյուզանդա-արաբական պատերազմների այս ընթացքը Հերակլ (610—641 թթ.) կայսրին ստիպեց ձեռնարկելու նոր և հիմնական միջոցառումներ: VII դարի վերջերին արաբները հասել էին Կիլիկիա, Նրանց առաջխաղացումը կասեցնելու նպատակով Հերակլը ձեռնարկել էր Տավրոսյան և Ամանոսյան լեռնաշղթաների տնցքերը ամրություններով փակելու գործը: Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում ստեղծվեցին բերդերից, ամրոցներից և ռազմագիտական նստատեղիների ծառայող կառույցներից բաղկացած սրաշտպանական խիտ և հզոր համակարգեր, որոնք արգելք էին հանդիսանալու իսլամիֆայության ներխուժմանը դեպի Փոքր Ասիայի ներքին նահանգները: Բնական և արհեստական արգելքներով ամրացված այս հզոր պատվարը հետագայում կասեցրեց արաբ աշխարհակալների առաջընթացը դեպի Բյուզանդական կայսրության փոքրասիական տիրույթները: Արաբները ևս ստեղծեցին ամրացված մի գոտի բյուզանդականի դիմաց և դա երկարեց Կիլիկիայից մինչև Մելիտինեի նահանգը: Նրանք սահմանային այդ ամրացված լայն գոտին անվանում էին թուղուր կամ սուղուր: Թե՛ բյուզանդացիները և թե՛ արաբները այդ ամրացված ռազմական գոտին համալրում էին ուրիշ վայրերից տեղահան արված բնակիչներով և ռազմիկներով: Ժամանակի ընթացքում, կողմերի ռազմական հաջողությանը համապատասխան, սահմանային այդ գոտին տեղաշարժվում էր ետ ու առաջ:

Պատմական տեղեկություններից հայտնի է, որ բյուզանդացիները և արաբները սահմանային ամրացված գոտին նոր մարտիկներով վերաբնակեցնելիս նրանց ապահովում էին հողով և ռոճիկով: Զինվորները խաղաղ պայմաններում զբաղվում էին հողագործությամբ, գյուղատնտեսությամբ, իսկ վտանգի ժամանակ կազմում էին բանակ:

Աղբյուրներից հայտնի է, որ բյուզանդացիները մեծ քանակությամբ օտարերկրացի ռազմիկներ են տեղավորել վերոհիշյալ սահմանային գոտու շրջանում: Նրանք կրում էին «վարձկան», «դաշնակից», «օժանդակ», «կամավոր» և այլ անուններ: Սակայն նպատակը նույնն էր: Նվաճողները միշտ ջանացել են զավթած երկրների ժողովուրդներին ծառայեցնել իրենց ռազմական նպատակներին: Բյուզանդացիները ղինվորներ հավաքագրելիս ազգային խտրություն չէին դնում, նրանց բանակում կային հայեր, սլավոններ, նորմաններ, սկանդինավյաններ, բուլղարներ, խաղարներ, պեչենեգներ, ասորիներ, ռուսներ, թուրքեր, վրացիներ, չեթեղներ և այլ ժողովուրդների ներկայացուցիչներ:

Արաբների դեմ մարտնչող բյուզանդական բանակում սլավոնների հիշատակությանը առաջին անգամ հանդիպում ենք 692 թ. դեպքերի կապակցությամբ: Բյուզանդիայի Հուստինիանոս II (685—695 թթ.) կայսրը, VII դարի առաջին կեսին Հեմուս թերակղզում բնակություն հաստատած սլավոններին ճնշելուց հետո նրանցից կազմեց օժանդակ զինքեր: 692 թ. Սեբաստուպոլիս քաղաքի մոտ նա արաբներից ծանր սպարտություն կրեց: Այդ պարտությունը ճակատագրական նշանակություն ունեցավ: Արաբական բանակի գլխավոր հրամանատարն էր խալիֆայի եղբայր Մուհամմեդ իբն Մրվանը, որը կարողացել էր իր կողմը գրավել բյուզանդական բանակի գլխավոր ուժը կազմող սլավոնական զինվորներին, որոնք բյուզանդացիներին դիտում էին իբրև իրենց նվաճողների: Սլավոնական զորքը կազմված էր շուրջ 30000 մարտիկներից: Այս դեպքերի մասին տեղեկություններ են պարունակում Միքայել Ասորու հետևյալ տողերը. «Եւ ՚ի ժամանակին յայնմիկ գերեաց Յուստիանոս զԿիպրոս. և եղև շմոր ընդ միմեանս Պարսից [Արաբաց] և Հոռոմոց: Եւ առաքեաց զՄահմէտ Աբդլայն՝ զամիրայն Ջպիրոյ յերկիր Հոռոմայեցւոց ՚ի Կեսարիա: Եւ Հոռոմք ՚ի վարձու առեալ զՍկլաւն, եկին պատերազմել ընդ Մահմէտ, և կոտորեցան Հոռոմայեցիք. և մնացեալ Սկլաւքն եղեն ընդ Տաճկաց եւթն հազար անձինք, և եղին զնոսա Տաճիկքն յԱնտաք և ՚ի Կուրիս տուեալ նոցա կանայք և ապրանք»¹:

Արաբական աղբյուրներում հիշվում է Հիսն աու-Սակալիբա (nisn as-saqāliba) կոչվող բերդի անունը, որը նշանակում է «Սլավոնների բերդ»²: Ըստ արաբ պատմագիր Բելազորու տեղեկության, Մրվան II խալիֆան (744—750 թթ.) Հիսն աու-Սակալիբայում բնակեցրել էր սլավոններ: Այդ բերդը գտնվում էր Տավրոս լեռների «Կիլիկյան դռներ» լեռնանցքի հյուսիսային ծայրամասի շրջանում, արդի Բասմակչը բնակավայրի շրջակայքում:

Ըստ արաբական ժամանակագիր Յակուբիի և Անանուն արաբ տարեգրի տված տեղեկությունների, խալիֆա Մամունը, 832 թ. Լուլուայի բերդը գրավելուց հետո ալն բնակեցրել է մահմեդականներով: Դրա հետ միասին սլավոններին և որոշ բանակությամբ մսնիքեացիների թուլլատրվել է մնալ Լուլուայի բերդում³: Լուլուայում սլավոնների բնակություն հաստատելը համընկնում է VIII դարի վերջին⁴:

IX դարում Դաշտային Կիլիկիայի Միսիս քաղաքում կար արաբական պահակազոր, որին նույն ալ-Մամուն խալիֆան (813—833 թթ.) ավելացրել էր 1000 մարտիկներ ևս: Նրանց մեջ կային պարսիկներ, բլիսսոնյա արաբներ և սլավոններ⁵:

Արաբների կողմից Կիլիկիայում և սահմանային ամրացված գոտում բնակեցված էին նաև քրդեր, որոնք Վասիլ I կայսեր 880 թ. դեպի Կիլիկիա ու

¹ «Ժամանակագրություն Տեառն Միխայլի Ասորոց պատերաբի», Յերոսաղիմ, 1871, էջ 327:

² Islām Ansiklopedisi, 2^{ci} baskı, İstanbul, cilt 7, էջ 110; Lütfü.

³ Նույն տեղում, էջ 109:

⁴ 2. թ. նալրանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Երևան, 1965, էջ 201, ծան. 322:

Հաղաթափի կողմերը կատարած ուսումնարշավի ժամանակ գերի էին ընկել բյուզանդացիների ձեռքը։ Սրանց բոլորին նա սայանել տվեց Կեսարիայում։ Իրա պատճառը այն էր, որ բացի ավազակությունից, ուրիշ ոչ մի բանի պիտանի մարդիկ չէին նրանք, — հաղորդում է պատմիչը⁵։

949 թ. բյուզանդացիները արշավեցին Կիլիկիայի կղզու վրա, որը գրավված էր արաբների կողմից։ Այս արշավին մասնակից էին եղել նաև 629 ռուսներ⁶։

953—954 թթ. բյուզանդա-ալաբական պատերազմների ժամանակ Վարդ Փոկասը սլավոններից և խազարներից բաղկացած բանակներ էր բերել Ջուլիս-բաթ կոչվող վայրը, որը գտնվում էր Ամանոսի լեռներում, Մարաշի ու Անտիոքի միջև։ Այդ մարտերի ժամանակ Վարդ Փոկասի բանակը Մարաշի մոտ Սայֆ ադ-Դաուլայից պարտություն էր կրել⁷։

Նիկեփորոս II (963—969 թթ.) կայսրը կազմակերպել էր վարձկան հայերից, վրացադավան հայերից ու վրացիներից, սլավոններից և ռուսներից հավաքված ընտիր մի զորք⁸։

Վասիլ II (976—1025) կայսրը վարյազների միջոցով ձեռք էր բերել Փոկասի ապստամբությունը (989 թ. ապրիլ)⁹։

Միջնադարյան հայկական գրավոր աղբյուրներում վարյազները (Ваeringjar, vaeringjar, varéques) անվանվել են «վոանգ»¹⁰, իսկ վրացական աղբյուրներում՝ «վառանգ»¹¹։ Պատմությունը հայտնի է, որ բյուզանդական բանակում ծառայող վարյազներն ընդհանրապես գտնվում էին Կոստանդնուպոլսում՝ իբր արքունի թիկնապահներ, Փոքր Ասիայի սահմանամերձ վայրերում և Իտալիայի հարավային մասերում՝ պետության սահմանները արաբների հարձակումներից պաշտպանելու համար։

Մինչ Վլադիմիր Սվյատոսլավիչ մեծ իշխանի քրիստոնեություն ընդունելը (988 թ.), ռուսաց իշխաններից ոմանք Բյուզանդական կայսրությանը

5 Կոստանդին Միրանաժին, Բյուզանդական աղբյուրներ, Բ. Թարգմ. և ծանոթագրեց՝ Հրաչ Բարթիկյան, Երևան, 1970, էջ 78, «Վասիլ Ա Մակեդոնացու կենսագրությունը», գլ. 49։

6 Նույն տեղում, էջ 149, «Բյուզանդական Արքունիքի արարողությունների մասին», գիրք II, գլ. 45։

7 Հ. Թ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 50 և 154, ծան. 134։ Յակոբ ալ-Համավի, Քիթաբ Մուլամ ալ-Բուլդան, հատ. Բ, էջ 97։

8 Հ. Գելցեր, Համառոտություն բյուզանդական կայսրների պատմության, Վաղարշապատ, 1901, էջ 141 և 227։

9 Նույն տեղում, էջ 249—250։

10 «Պատմություն Արիստակիսի Հաստիվերտցու», աշխատ. Կ. Ն. Յուզբաշյանի, Երևան, 1963, էջ 88։

11 Մատթեոս Ուոհայեցու ժամանակագրության հրատարակություններում տպված է «Փոանգ», «Ֆրանկ» ուղղագրությամբ. տե՛ս Մատթեոս Ուոհայեցի. Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 350։ Մատթեոս Ուոհայեցի. Ժամանակագրություն, Թարգմ. և ծանոթագրություններ Հ. Բարթիկյանի, Երևան, 1973, էջ 234։ Ս. Տ. Երեմյանը գտնում է, որ դասիալ գրության հետևանք է և պիտի լինի «վոանգ» տե՛ս С. Т. Еремьян, Юрий Боголюбовский в армянских и грузинских источниках, «Իտական աշխատություններ Երևանի պետական համալսարանի», 1946, էջ 390։ Կ. Յուզբաշյան, Արիստակիս Հաստիվերտցու «Պատմություն» մեկ տարբերակի մասին՝ Վոանգը և՛ ոչ Փոանկը», «Բանբեր Մատենադարանի», № 4, Երևան, 1958, էջ 77—82։

տվել էին վարձկան ռազմիկներ¹²։ Իսկ 986 թ. սկսած, ռուսները սլաշտոռնական կերպով ղինակցում էին բյուզանդացիների հետ¹³։

Վասիլ II Բուլղարասպան կայսեր 1014 թ. բուլղարների դեմ ունեցած պատերազմական հաջողություններից հետո, Հեմուս թերակղզու բուլղար բնակչությունը տեղահան արվեց և արտոլեց մինչև Հայաստան¹⁴ ընկած երկրները, այդ թվում նաև Կիլիկիա։ Բյուզանդական պետությունը պատերազմական գործողություններին առավել չսփուլ մասնակից էր անում սկանդինավյաներին, ռուսներին և իսլանդացիներին¹⁵։ 1066 թ. Վիլհելմ Նվաճողի (1066—1087 թթ.) Հաստինգսի հաղթանակից հետո բաղձաթիվ դանիացիք և անգլոսաքսեր բյուզանդացիների մոտ ծառայության անցան։ Բացի այդ, բյուզանդական բանակում կային մեծ թվով Իտալիայի նորմաններ, որոնք համարվում են ֆրանկներ։ XII դարում՝ Փոքր Ասիայի հարավային մասերի բյուզանդական տիրույթներում (հատկապես Իսադրիայում, Պամփուլիայում) և XIII դարում՝ Սմբատ սպարապետի «Տարեգրքում» «Աշխարհ Սիր-Ատանայ»¹⁶ անվանված երկրամասում հաստատված ֆրանկ բերդակալ իշխանները հավանաբար սերած պիտի լինեն անցյալում բյուզանդական բանակում ծառայած Իտալիայի նորման ասպետներից։

Բյուզանդա-արաբական դարավոր պատերազմների ժամանակ, «սահմանային ամրացված գոտում» բնակեցված էթնիկապես տարբեր ժողովուրդների պատկանող ռազմիկ բնակիչների նկատմամբ հիշյալ երկու պետությունները գործադրում էին հատուկ քաղաքականություն։ Հեռավոր երկրներին բերված ու այդ գոտում բնակեցված ռազմիկները սահմանների տեղաշարժի ու պատերազմների պատճառով ենթարկվում էին մեծ չափերի հասնող կոտորածների և գերության։ Ողջ մնացածների մեծ մասը, կյանքը փրկելու նպատակով, դիմում էր հավատափոխության։ Դրանց մի մասն էլ հավատափոխ էր լինում նվաճողների գործադրած բռնությունների պատճառով։ Պատմական նշանակություն ունեցող մի շարք տեղեկություններից և բյուզանդական հերոսական էպոս «Վասիլ Դիգենիս Ակրիտասի» պատումների բովանդակությունից պարզվում է, որ Ասորիքի Անտիոք քաղաքից մինչև Մեդիտերանի գավառը ձգվող թուրքերի սահմանամերձ վայրերում ապրողներն էին սահմանափակվում են իսլամիզմին։ Դա բնական երևույթ էր և դաբար պատերազմների պատճառով այլ կերպ չէր կարող լինել։ Բաղձաթիվ անգամներ այդ վայրերի բնակիչները դիմում էին փախուստի։ Լքված բնակավայրերը մնում էին անմարդաբնակ և հետևապես՝ անսլաշտոռնային։ Ուստի երկու պետություններն էլ նոր համալրումներով լրացնում էին պակասը։ Նորեկ ռազմիկները ամուսնական խառը կապերով ստեղծում էին նոր սերունդ, որը կտրված էր նախնիների ավանդույթներից, հավատալիքներից, անցյալից ու այն ամենից, ինչը բնորոշում է էթնիկապես կազմավորված ժողովրդին։ Վասիլ Դիգենիս Ակրիտասի նախնիների մեջ եղել են հայկական ծագում ունեցող ֆեոդալներ, կապաղովկացի հույն կամ հունադավան հայեր,

¹² Հ. Դեյցեր, նշվ. աշխ., էջ 249։

¹³ Նույն տեղում, էջ 250։

¹⁴ Նույն տեղում, էջ 257։

¹⁵ Նույն տեղում, էջ 274։

¹⁶ «Սմբատայ Սպարապետի Տարեգիրք», Վենետիկ, 1956, էջ 222։

մահմեդականացած բյուզանդացիներ, քրիստոնեություն ընդունած մահմեդականներ: էպոսում գործող մյուս անձնավորությունների մեջ ևս կան խառնածիններ: Ոստի կարելի է եզրակացնել, որ էթնիկապես տարբեր ժողովուրդների զավակների համար ինչ խոշոր մի խառնարան էր ստեղծվել բյուզանդական և արաբական պետությունների սահմանամերձ գոտում:

Բյուզանդացիները, հիշյալ սահմանամերձ վայրերում երկար ժամանակ բնակություն հաստատած և ազգային հատկանիշները պահպանած բնիկներին (հատկապես հայերին ու ասորիներին) տեղահան անելով տեղավորում էին կայսրության հեռավոր այլ վայրերը: Այդ մասին է վկայում Միքայել Ասորու հետևյալ տեղեկությունը, որ վերաբերում է Ասորիքի և Միջագետքի հյուսիսային մասերից դեպի Թրակիա տեղահան արված հայ և ասորի բնակչությանը. «Եւ լեւոն¹⁷ առաքեաց զօր ՚ի Միջագետս, և տարան զքրիստոնեայսն. Հայս և Ասորիս ուղղափառս, և բնակեցոյց ընդ ինքեան ՚ի Թրակիա»¹⁸:

Պատահական չէ վրացական և վրացադավան հայերի ավերված միջնադարյան վանքերի ու եկեղեցիների առկայությունը Հյուսիսային Ասորիքում: Դրանք արդյունք են Բյուզանդական այն քաղաքականության, որի հետևանքով Կովկասից ու Հայաստանից տեղահան արված հայերն ու վրացիները նոր բնակավայրերում հիմնել են իրենց հոգևոր և աշխարհիկ պահանջներին համապատասխան կառույցներ:

XIV դարի արաբ ժամանակագիր Աբու-լ Ֆիդայի տված տեղեկության համաձայն, 1071 թ. Մանազկերտի նշանավոր ճակատամարտում, բացի հայերից, բյուզանդական բանակում եղել են չերքեզներ, հույներ, ռուսներ և այլ ազգերի մարտիկներ¹⁹:

Միջին դարերում Կիլիկիայում սլավոնների ու ռուսների բնակության մասին այն բոլոր տեղեկությունները մեզ համար գոհացուցիչ ապացույց չէր կարելի համարել, եթե չլինեին լատիներեն գրված ուշագրավ մի փաստաթուղթ, որը լույս է սփռում անցյալի մթության վրա: Այդ կարևոր փաստաթուղթը ստորագրել և ոտկե բուլլայով կնքել է Կիլիկիայի Հայկական պետության թագավոր Լևոն II-ը (1187—1219 թթ.): Դա 1212 թ. ապրիլին Տևտոնյան կարգի ասպետներին տրված մի պարզեագիր է:

Փաստաթղթի բովանդակությունից պարզվում է, որ Լևոն թագավորը որոշ ծառայությունների դիմաց տևտոնյան ասպետների տնօրինությանն է թողել մի շարք տիրույթներ: Դրանց թվում էր նաև Ամանոսյան լեռների այն հատվածը, որը գտնվում էր Անավարդա բերդաքաղաքի արևելյան կողմի կիսաշրջանակում, Զահան գետահովտի աջ ափին: Այս տիրույթի մեջ էին գտնվում Աիմանակլա բերդը, Ամուտա բերդը (այժմ՝ Հեմիթե կալե), Թիլսապ բերդը և սրանց միջանկյալ վայրերը: Պարզեագրում հետևյալ տողերով տրվում է տիրույթի սահմանների մանրամասն նկարագրությունը. «...Alia divisio inter pastores et Amidain tendit usque ad collem ante quem collem, sunt duo rubi salvatici et arbor morasius; de hinc tendit usque ad

17 Լևոն Ե հայազգի, կայսր Բյուզանդիայի (813—820 թթ.):

18 Միքայել Ասորի, էջ 353:

19 Հ. Թ. Նալբանդյան, նշվ. աշխ., էջ 216:

gastinam dictam Dagie et extenditur usque ad Zamga; de hinc usque ad lacum Hella et loh; et inter loh et Ramam est quedam cava divisa.²⁰

Ուսումնասիրությունից պարզվում է, որ պարզեցման բնագիրը նախ գրվել է հայերեն, ապա տևտոնյան ասպետների համար թարգմանվել և գրի է առնվել լատիներեն։ Պարզեցումը նշված տեղանունների թվում կա Zamga բնակավայրի անունը։ Հայերեն ուղղագրությամբ դա կլինե՝ «Ջամգա», որը ուսերեն կամ սլավոնական լեզվով «զամոկ» (замок) բառի հայերեն հոլովված ձևն է և նշանակում է «ղղյակ», «պալատ»։ Zamga վայրի անունը անկասկած սլավոնական կամ ռուսական ծագում ունի։ Բնշխոսք, որ VIII—XI դդ. միջև վերոհիշյալ միջավայրում բնակություն հաստատած սլավոնները կամ ռուսները բերդավանդ անվանել են համապատասխան անունով։ Ջամգա բառը արաբերենում, թուրքերենում, հունարենում, ասորերենում և առհասարակ Մերձավոր Արևելքի լեզուներում չունի ոչ մի իմաստ։ Մենք եկանք այն եզրակացության, որ 1212 թ. Կիլիկիայի Ջամգա վայրը համապատասխանում է արգի Կըլըլ-կայա կալե (Kızılkaya kale) ամրոցին, որը գտնվում է Ջահան գետի աջ ափի մոտ և Հեմիթե գյուղից արևելք գետի կազմած կիսաշրջանակում։ Այդտեղից հյուսիս այժմ կան նաև Կալե և Բաբա-Օղլան կալե (Baba-oglan kale) կոչվող ամրոցների հնավայրերը։

Բյուզանդա-արաբական պատերազմների ժամանակ բյուզանդացիները, սլավոններից բացի, Հեմուսի թերակղզուց և անդրգանության երկրներից Կիլիկիա էին տեղափոխում նաև բուլղարների և պեչենեգների, որոնք հայ միջնադարյան գրականությունում հիշվում էին իբր պեչենեգներ, պեչենեգներ (վրացերեն «պաճանիգ»)։

Հնում Բալկանյան թերակղզին լատիներեն կոչվում էր Haemus (Հեմուս)։ Ժամանակի ընթացքում դա կրճատվելով վերածվել է Հեմուս կամ Համուս տեղանվան։ Հեմուսի (Hemus) թերակղզուց Կիլիկիա տեղափոխված սլավոնների հետ միասին Կիլիկիա է տեղափոխվել նաև հայրենի երկրի անունը և սրանից էլ Համուս է կոչվել Ամանոս լեռներում, Ջահան գետի ջրավազանում գտնվող բյուզանդական բերդերից մեկը, որը Կիլիկիայի հայկական պետության ժամանակ նշանավոր ամրոց էր։ Համուսի բերդում էր, որ բյուզանդացիները եռացրած ջրով լի կաթսայի մեջ սպանել էին Լևոն II թագավորի հայր Ստեփանե իշխանին։ Միջնադարյան Համուս բերդի անունը ևս ասպացուցում է Կիլիկիայում՝ Ամանոս լեռների վերոհիշյալ հատվածում բնակություն հաստատած սլավոն ռազմիկների մասին։

Արաբներեն «Համմուս» բառը, որը նշանակում է սիսեռ, ոչ մի առնչություն չունի վերոհիշյալ Համուս բերդի հետ։ Արաբները այդ բերդը անվանում էին Հումեյ-Մասսա։ Պատահական չէ Ամանոս լեռների վերոհիշյալ հատվածում գտնվող արդի Էլլեք-պեչենեկ (Ellek-peçenek) բնակավայրի անունը, որը նշանակում է «Պեչենեգների ավան»։

Բյուզանդագետներին քաջ հայտնի է, որ պեչենեգները մի քանի դար շարունակ զրաղեցնում էին բյուզանդացիներին։ Մերթ ղինակցում էին Բյուզանդական կայսրության թշնամիների, մերթ՝ բյուզանդացիների հետ։

²⁰ Victor Langlois, Le trésor des chartes d'Arménie ou Cartulaire de chancellerie royale des Roupéniens, Venise, 1863, էջ 118.

IX—XII դդ. լինթացքում նրանք բազմաթիվ անգամներ մարտեր մղեցին ռուսների, բյուզանդացիների, կոմանների և շրջակա այլ ժողովուրդների դեմ: XI դարի վերջին և XII-ի առաջին քառորդում իրենց կրած պարտությունների պատճառով կոտորվեցին ու ջնջվեցին պատմության ասպարեզից: Պեչենեգներին վերջին հարվածը հասցրեց Բյուզանդիայի կայսր Հովհան II Կոմենենոսը (1118—1143 թթ.): 1123 թ. գարնանը նա պեչենեգներին կոտորեց և վերջնականապես ջնջեց Հեմուսի երկրից: Ահա Հեմուսի երկրամասում նոր հաստատված պեչենեգների անունով մի բնակավայր էլ տեսնում ենք Կիլիկիայի Ամանոս լեռներում:

Ռումինիայի տարածքում հնում ապրում էին դակերը կամ դակիացիները: Նրանց երկիրը կոչվում էր Դակիա կամ Դաճիա (Dacia): Մինչև II դարի սկիզբը նրանք ունեին անկախ թագավորություն: Դակիան հռոմեական պրովինցիայի վերածվելուց հետո ևս երկրամասը պահպանել էր իր հին անունը:

Դանուբ գետից հյուսիս՝ Դակիայում հաստատված նորաբնակները իրենց հետ միասին Կիլիկիա են բերել Դակիայի անունը և տվել իրենց նոր բնակավայրին: Հավանաբար դրա արդյունքն է ևս II թագավորի վերոհիշյալ պարզեցումը նշված Dagie²¹ տեղանունը, որը գտնվելիս է եղել Zamga-ի շրջակայքում, Ամանոս լեռների հիշյալ հատվածում:

Բուլղարները անցյալում ապրում էին Վուդա գետի ավազանում՝ Կազանի շրջակայքում և պատկանում էին թուրանական ցեղերի մեծ ընտանիքին: Տեղաշարժվելով դեպի արևմուտք, նրանք անցան Դանուբ գետը և մտան Հեմուսի երկիրը, ուր իրենցից առաջ բնակություն էին հաստատել սլավոնները: Բուլղարների ու սլավոնների միաձուլումից առաջացան արդի բուլղարների նախնիները: Սլավոնների քաղաքակրթությանը միացան բուլղարների վարչական և կազմակերպչական ընդունակությունները: Սլավոնների լեզուն, գրականությունը և ազգային ավանդույթներ ու այլ ազդակներ, քաղաքակրթությամբ ավելի ցածր մակարդակի բուլղարներին կլանեցին և լուծեցին: Իսկ պետությունը կոչվեց Բուլղարական թագավորություն, քանի որ պետականությունը հիմնողները եղան բուլղարները: Այգսլիսով առաջացավ սլավ-բուլղարների ստվար մի ազգաբնակչություն:

Բյուզանդական պետությունը գարեք շարունակ ընդհարվում էր Հեմուսի թերակղզում հաստատված բուլղարների հետ: Միջին դարերում բուլղար մարտիկներից կազմված զնդեր վերաբնակեցվել են Կիլիկիայի լեռնային մասերում, հատկապես Տավրոսյան լեռների «Կիլիկյան դռների» (Կուկլակի

կիրճի, արդի Külek bogazi) հատվածում: Կիլիկյան Տավրոսում հանդիպող

Բուլղարդաղ (Bulgardagi, Bolkar, dagi). Բուլղար մաղարա և Բուլղար մադեն տեղանունները ինչ-որ չափով առնչվում են հիշյալ ժողովրդի անվան հետ: Արաբների կողմից սլավոններով բնակեցված Հիսն աս-Սակալիբա և Լուլուա բերդերը ևս մոտ էին Կուկլակի կիրճին, Բուլղարդաղ լեռանը, Բուլղար մաղարա բնակավայրին և Բուլղար մադեն հանքավայրին:

XIII դարի 30-ական թթ., Ռումի սելջուկ պետության (Իկոնիայի սուլթանության) տարածքում տնտեսական սրայմանների վատթարացման հետևանքով ապստամբություններ էր լինում: 1231 թ. ապստամբության առաջ-

²¹ V. Langlois, նշվ. աշխ., էջ 118.

նորդ Բաբա Իւյաս հորասանիի հետևորդներ Բուղար Բաբայի և Բուղար Բողոզլան Բարայի գերեզմանները գտնվում են Կիլիկյան Տաւրոսի Բուղար-դաղ լեռան հյուսիսային լանջին, Ուլուկըշլա շրջանի Գյումյուշ մադեն (Gumüş maden) գյուղի մոտ: Սրանից էլ կարելի է եզրակացնել, որ Կուկլակի կիրճի շրջանում վերաբնակեցված բուղարները դարերի ընթացքում իսլամ կրոնը ընդունելով՝ թուրքացել են:

Վերոհիշյալ մի քանի պատմական փաստերից կարելի է եզրակացնել, որ միջին դարերում Բյուզանդիայի կայսրերը և արաբական խալիֆաները Կիլիկիան վերաբնակեցրել են օտարերկրյա բնակիչներով: Այդ թվում Կիլիկիայում վերաբնակեցվել են նաև սլավոններ, ուսներ, բուղարներ և պեչենեգներ: Ժամանակի ընթացքում և հանդամանքների բերումով այդ բոլորը իսլամացել և լուծվել են թուրք էթնոսի մեջ:

СЛАВЯНСКИЕ И РУССКИЕ ПОСЕЛЕНИЯ В СРЕДНЕВЕКОВОЙ КИЛИКИИ

М. Г. ДЖЕВАНРДЖЯН

(Резюме)

В статье впервые рассматриваются обстоятельства основания населенных пунктов воинами—славянами, русскими, болгарами, печенегами в киликийской части пограничной укрепленной зоны на границе Византии и Арабского халифата. Фактической основой для нас послужил ряд исторических свидетельств, а также топонимика упомянутого района, сохранившаяся в дарственной грамоте, выданной в 1212г. царем Киликийского армянского государства Левоном II (1187—1219) рыцарям Тевтонского ордена.